Աջակցություն գյուղական համայնքներին 1988-ից

ՀՀ, ք. Երևան 0001
110 Նալբանդյան փ.
+374 60 499 010
info@shen.am
www.shen.am

Երևան 18 սեպտեմբերի 2024թ.

Ջերմոցների կառուցման բաց մրցույթի հրավեր

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը հայտարարում է բաց մրցույթ Տավուշի մարզի Զորական գյուղում 3 ջերմոցների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով: Ջերմոցների կառուցման ժամկետը նախատեսված է 01.10.2024 - 31.10.2024թթ:

Բաց մրցույթի մանրամասները կարող եք տեսնել ստորև:

Ջերմոցների կառուցման տեխնիկական պահանջներ

3 ջերմոցները կառուցվելու են Տավուշի մարզի Զորական գյուղի տարածքում: Ջերմոցների մակերեսի հարթեցումը կկատարեն շահառուները՝ իրենց միջոցներով:

Տեխնիկական պահանջները ներկայացված են ստորև.

- Կոնստրուկցիան՝ թունելային, պոլիէթիլենային թաղանթով,
- 3 ջերմոցներից յուրաքանչյուրի մակերեսը՝ 100 ք.մ. անհրաժեշտ բոլոր նյութերով և սարքավորումներով,
- ջերմոցների հենակմախքային համակարգի համար անհրաժեշտ մետաղական սյուները՝ 3 դյույմ տրամագծով,
- տանիքի կիսալուսանաձև մասի մետաղական քառանկյուն խողովակների չափսերը՝ 40*40*0.2,
- դռան տեղադրում,
- ջերմոցի ծածկող թաղանթը՝ հնգաշերտ, իր զսպանակային պրոֆիլներով,
- կաթիլային ոռոգման համակարգ՝ ներառյալ 1 տ տարողությամբ ջրի բաքի, պոմպի, ֆիլտրի, կաթիլային խողովակների և կաթոցիկների,
- օդափոխության համակարգ նյութերով և սարքավորումներով,
- էլեկտրականության համակարգ նյութերով և սարքավորումներով:

Գնառաջարկի ներկայացման պարտադիր պայմաններ.

- Ներկայացնել գնառաջարկ 3 ջերմոցների կառուցման համար, որի մեջ ներառված կլինի բոլոր տեսակի շինարարական և մոնտաժային աշխատանքների, ինչպես նաև բեռնափոխադրումների արժեքը,
- Գնառաջարկը ներկայացնել առանց ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գումարի, քանի որ «Շեն» ԲՀԿ-ը դիմելու է ՀՀ կառավարությանը՝ ջերմոցների կառուցման գործարքներն ԱԱՀ-ից ազատելու համար:
- Գնառաջարկը ներկայացնել հետևյալ ժամկետում՝ 18.09.2024 - 26.09.2024թթ.,
- Կնքված, ստորագրված, նշված ամսաթվով,
- Էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով info@shen.am էլեկտրոնային հասցեին՝ թեմա բաժնում նշելով «Գնառաջարկ_ջերմոցներ»:

Մրցույթի կազմակերպման կանոնները և հաղթողին որոշելու կարգը՝

- Կդիտարկվեն միայն ամբողջական գնառաջարկ պարունակող դիմումները, որոնք հայտատուին կներկայացվեն սահմանված ժամկետներում:
- Հաղթողը որոշվելու է ներկայացված գնային առաջարկի և տեխնիկական պահանջներին առավելագույն համապատասխանության ընդհանուր համադրման արդյունքում:

Կոնտակտային անձ՝ Անահիտ Նավասարդյան
Հեռախոս՝ 095-30-83-83
Էլ. հասցե՝ anavasardyan@shen.am